Գ . || Ծական եղեալ ՚ի հոլովն սեռական իբրև յա-
կացուցիչ գոյականին : Եւ շինեցին զամրակողմնն
զգլուխ քաղաքին ՚ի պարխապս ամուրս , յաշտարակս
հօրոս . || փոխանակ ասելոյ , յաշտարակս հօրոս :

Օլեզու մարդկան ոչ որ կարէ հնազանդել , զլի Թու-
նօք մահաբէրին . || փոխանակ , լի մահաբեր Թունօք :

Փառաբանչօրն անմահից . || փոխնի , անմահ փառբանչօք :

Չեռամբդ նորոգողի , մատամբդ իենսաբաշի , յարա-
կայուբդ անեղծի , երեսօրդ զարբախանի . || այսինքն նո-
րոգող ձեռամբդ , կենսաբաշիս մատամբդ , ևն :

Բստ դրուի յաճախ տեսանի յանցել ընդունելուիս . Գ՞ :

Երբին իւղով ՚ի մրրոց պարզելոյ . || այսինքն պարզելով :

Իմով արեամբ վասն ձեր հեղաց . || այսինքն հեղով :

Ե ՚ի հարուածք դարձելոցն ՚ի Թողուի մեղաց լինին պա-
տուհասիւքն ՚ի վերայ եկելոցն ՚ի տեսանէ . || այսինքն
պատուհասիւքն ՚ի վերայ եկելովք :

Լեւտարանական ուսուցանաւն արիւնջն ՚ի ծով . ॥ այսինքն
ուսուցանաւն արիւնջով :

Է . Պոլսական եղեալ ՚ի հոլովն սեռական իբրև յատ-
կացուցիչ ածականին : Լրգելականք իստանայ ՚ի կու-
սաստանաց անտի ՚ի դրունս և ՚ի պարիսպս ընթանային :

॥ փոխանակ ասելոյ , արգելական կուսանք :

Իբրև թէ բաշխել նոցա զտահէկանայ տարևորն . ॥ փո-
խանակ , զտարևոր դահէկանան :

Եւս աստէն զհագիտան յաղգի աղգի արամութէց զի-
շերայնով անայ . ॥ փոխանակ , զիշերային քնով :

ԿԱՆՈՆ . Գ

Եթէ ածականն իցէ նախադաս և եթէ գոյական-
նրն , սովորաբար նախդիրն դնի ՚ի վերայ նախադասին :

Մ . Ծականն նախադաս եղէլ առնու զնախդիրն . ցօ :

Ս . Ինչ մարմնական ՚ի հոգևոր գործս խառնեցուք :

॥ Ուր նախդիրք Ի՛ եղեալէ ՚ի վր նախադաս ածակա-
նին , որ է բառդ հոգևոր : Եւս այսմ է և ՚ի սոսին :

Որ մոլորեցուցանեն զայլս յուղիղ հաւատոց և Ի՛ սուրբ
վարուց , զդիւացն զկարգ ունին :

Ի ուսուցանէ ՚ի մեղ զգեղեցիկ բոցս առաքինութի :

Սքանչանային ընդ անհաս խորհուրդն աստուծոյ :

Ը . Եթէ նախադաս ածականք իցեն բազում , և ունի-
ցին զշաղկապդ . և , նախդիրն սովորաբար դնի ՚ի վերայ
ամենայն ածականաց . ցօ :

Ընկաք Ի՛ ցաւալից և Ի՛ բազմածուփ կենցաղս :

Պարտ է մեղ կորուսանել ՚ի սրտէ զընդունայն և զա-
պիրատ և զսնտաի խորհուրդսն :

Ինն յանբաւ և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին :

Ի այց սակաւ ուրեք նախդիրն ՚ի վերայ առաջնոցն
միայն դնի և յիւրաքանչիւրսն ոչ կրկնի . զոր օրինակ է

Նօգեալք Ի՛ կենդանի և կենդանարար գլուխն մեր քն :

Ի այցուք զչարաչար և անկարգ խառնակութիւնսն :

7. Եթէ նախագոյն ամառներ իցեն առանց շաղկապի,
 նախդիրն սովորաբար դնի ՚ի վր՝ առաջնոյն միայն . և
 Հրաժարեցոյց ՚ի հետնոսական անկարգ շախոսուէն .
 Սի խոտորես Վեր շարքունական՝ անխոտոր պողոտայէն :
 Իմացեալ զմահաւոր նենգաւոր շունչ պատրանաց նց :

Ի այց երբեմն ՚ի վերայ ամենեցուն ևս դնի . և
 Ի նկան շնծակիր ՚ի լուսեղէն սպասաւորութենէն :
 Ի բաց ընկեցին զմարմնաւոր զգոյնդակ մեծութիւնսն :
 Զլսատուածախօս զստուածապատուժ զաւետապարգև
 վարդապետութիւն միածնին նոյ կարգեցին ամազգաց :

8. Երբեմն նախդիրն ոչ միայն դնի ՚ի վր՝ նախագոյն ամ-
 ծականին , այլև կրկնի ՚ի վր՝ յետագոյն գոյականին . և
 Ի ծեր ՚ի վերայ նոցա զանհարին զմեղադ :

Տեսանես զբարձրանշան զհոգեւոր և զյանկարծա-
 հաս զմուտ հոգեւոյն սրբոյ :

9. Ի նցաւոր ՚ի կեանս սակաւ աշխատելով՝ յերկինս յա-
 լիտեանս յաւիտենից թագաւորեսցուք :

ԿԱՆՈՆ . Դ

10. Եթէ յետագոյն գոյականք իցեն բազումք յողեալք
 շաղկապաւս և , նախդիրն դնի ոչ միայն ՚ի վր՝ ամակա-
 նին , այլև ՚ի վր՝ երկրորդ գոյականին , և յետագոյնց նց . և
 Զհրեշտակական կարգս և զլարս յանձին բերին յճի :
 Զլ՚եծամեծ պարգևս և զպատիւ ընդունին յարքայէ :

11. Երկեան յահագին սպառնալեաց և ՚ի տանջանաց :
 Ի այց սակաւ ուրեք նախդիրն դնի ՚ի վր՝ նախընթաց
 ամականին միայն . և յոչ զօրութիւնն , և զանպիտան
 աղտ և ժանկ խառնեալ ընդ ոսկեոյ և արծաթոյ՝ սրբել :

12. Երբեմն արագոյց հասարակ կանոնի նախդիրն դնի
 ՚ի վերայ յետագոյն գոյականին , և ոչ ՚ի վերայ նախա-
 գոյն ամականին . և այս յաւետ ՚ի հայցական հոլովս :

Կամ յոտանաւոր բանս . և

13. Եւ յաջաց դնէ զուարթածաղիկ զուրախութիւնսն :

Ի նապահան սուրբ զխաչն օրհնեսցուք
 Յորմէ սարսեալ դողային փայլահնացայտ Կլուսոյն ։
 Պիտաբար հեռեեցան լուսաշաւիղ ընդ պողոտայն ։

Գ . Եթէ ՚ի մէջ նախագաս ամականի և յետագաս
 գոյականի անկցի բայ , նախդիրն սովորաբար դնի ՚ի
 վերայ երկուցն ևս . օր . զՏիեզերականն հանդեր-
 ձեալ էր կատարել զփրկութիւնս ։

Ի Լուսեղէնն տանի շառագաստ զհարսնացեալն իւր
 Ի Վրովբէական և ջանպատում հանգուցել էս յաթոս
 Ի այց սակաւ ուրէք դնի միայն ՚ի վերայ յետագասին ,
 և այն ՚ի հայցական հօլովի . օր .

Բաբելական առեր զպատիւ և զխիսանութի ՚ի բէ
 Հարցանէլն երկշաւիղ ունէր զխորհուրդ
 Սեծամեծս ևս ցուցանէ նմա զգործս

Գ . Երկանն նախագաս եղել առնու զնախդիրն . օր .
 Օսյր հաւատարիմ գործ է գտանել ։ ॥ Ուր նախդիրն
 չ'եղեալ է ՚ի վր նախագաս գոյականին , որ է բառս այր
 Սեղօք կորուսաք զփառս յաւեժականս

Ի նկան Ի բերդս ամուրս և Ի բանտս անելս
 Երկանս եթէ յետագաս ամականք իցեն բազումք . օր .
 Ղրս պատուականս և պիտանիս հաստատէր
 Ունի զօրէնս խաղաղականս և փրկականս
 Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ

Է . Երբեմն դնի նախդիրն նաև ՚ի վերայ յետագաս
 ամականին , եթէ մի իցէ և եթէ բազում . օր .

Հեղին զարիւն զարդար շուրջ զսրբութեամբն
 Բրգէլ զնա ՚ի ճաշակելոյ Ի տնկոյ իմեքէ Ի մահաբերէ ։
 Շրջեցաք ընդ ամ անապատն ընդ մեծ և ընդ ահագին ։

Չ . Երբեմն դնի ՚ի վերայ նախագաս գոյականին , և
 ՚ի վերայ երկրորդ յետագաս ամականին . օր .
 Ղ . Ս Ղ զուարթ և զառատ սիրէ աստուած

Տանջին Կճգունս զանազանս և Կբաղմասպատիկս
 յՍամուհնս պէսպէսս և յօտարաձայն մի՛ դանդաշէք :

Է . Երբեմն վայելուչ ևս կրկնի յերկոսին , յոր-
 ժամ Իմէջ նոցա կայցէ այլ բառ . Գ՞ :

Բնկեց զնա Կվի՛ճ մի յանտառին Կխորին յոյժ
 Իուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոց :

Եւ հասեալ նոցա , զգրուանս առին զարտաքինս
 յ՛նապատէ եկեալ յերկրէ :

Ը . Երբեմն նախդիրն զանց եղեալ Ի նախադասն թէ
 գոյական իցէ և թէ ածական , դնի Ի վերայ յետա-

դասին , յաւեա Ի հայցական հոլովն՝ որ սովոր է աննախ
 դիր վարիլ . Գ՞ :

Ղանապարհ զարբունի գնացուք . ॥ փոխանակ ասե-
 լայ , զձանապարհ արբունի :

Կերան հաց նեղութեան զչորաբեկն . ॥ փոխանակ ,
 զհաց նեղութեան :

Կրկին զհոգին որ Ի նմա՛ խնդրեալ ընկալաւ . ॥ փո-
 խանակ , զկրկին հոգին :

ԿԱՆՈՆ . Ե

Ա . Ծական նախադաս կամ յետադաս՝ յորժամ հո-
 լովով համաձայնի ընդ գոյականին , պարտի համա-

ձայնիլ և թուով . Գ՞ : Ս՛եծաւ զօրութի . Բնա-ի-
 բորբոքմամբ . Կ նորոց իշխանէ . Կ բաղմայ իմաստնոց .

Լեղուաւ նէնգաւորաւ . բարամբք պատուանո՛ . զարս
 Կաջն . Ի զօրաց պատերազմոց :

Բայց յանեղական գոյականս ածականն հոլովով
 համաձայնեալ՝ չէ պարտական համաձայնիլ և թուով .

ուստի տաի , Ռեծաւ տանջանօք . փառօք բաղմաւ . Ռեծա-
 փունի երախտեաց . կենացս անցաւորի :

Բ . Ծականք՝ յարեալ յանուանս որք նշանակեն ըզ-
 բաղմութի կամ զստակուի , որպի էն հանրականք :

Հաւարականք , թուականք , և բաղդատականք , երբեմն ըստ թուոյն երեւին անհամաձայն , այլ ըստ մտացն են համաձայն . ԳՐ : Բնեւայն ժողովրդեանն էլէլոց յեգիպտոսէ : ॥ Ուր յոքնակի ածականս էլէլոյ՝ եգեալէ առ եզակի հաւարականն՝ ամենայն ժողովրդեանն :

Բսէ եղիտզար քահանայ ցարս զօրուն եկէլոց Իձա-
կատէ պատերազմին : ॥ Ուր զօրուն է հաւարական ե-
զակի , իսկ ածական նորա էլէլոյ՝ յոքնակի :

Սատակեսցի ամենայն մարդ Դիմակոյ՝ թագաւորի :
Որ համբերուի քով ստացար քեզ ժողովուրդ սեպհական
և ընտրեալու : Բն ընդ իւր եօթն հարիւր այր սոսերաճի գու :

Գ . Ըստ այսմ դնին և բաղդատականք որք զսասակուի
նշանակեն . ԳՐ : Ընտրեալուի բեռանց ներքոց անկեալ
Ի բարձրագոյնսն համարձակեալ ձեռնարկու թի :

Ի Բժափոսնէն երկուցեալ Ի դատաստանացն :

Գ . Ըստանին ուրեք և այլ հասարակ ածականք , որք
հոլովով համաձայն են ընդ գոյականին , բայց թուով
անհամաձայն . ԳՐ : Բսէլով զշարմանալին լողաց բան :

Որք երկուսոցն չէաք արժանաւորք բարու թեանց :
Բյոցիկ բարոյ աւանդու թէց եղեն հեղինակք :
Բայց այսպիսի անհամաձայնութի ածականաց է զգուշալի :

ԿԱՆՈՆ . 2

Թ . Ըստականն յորժամ փոխեսցէ զհոլովն՝ և ոչ ըստ կա-
նոնի ածականաց կարգեսցի առ գոյականն , յայնժամ
համաձայնութին ոչ ըստ կանոնի ածականաց է դատելի :

Բարդ ածական անունն դնի երբեմն բացառական
հոլովով . երբեմն գործիական հոլովով գոյականին , կամ
նախադրու թի . և երբեմն սեռական գոյականաւ :

Թ . Բացառական հոլով դնի . ԳՐ : Բպա ոչ է յաննմ-
նէյն , և ձեզ խոնարհիլ : ॥ Ուր զօրուի իմանի գոյականն ,
որպէս թէ սսէր . ॥ Չէ աննման կամ անյարմար իրք :

Թէ և Կ' կարի զօրաւորաց իցէ եղն և Կ' պարարաց . || փոխանակ ասելոյ , Թէ և յոյժ զօրաւոր և պարարտ : Յայսպիսի ոճս՝ ածականն խնդիր էական բային է համարելի :
 Դ . Դ գործիական հօլով գոյականին , կամ նախագրու թէ . Դ՛ : Օ ճուլութի կեանս , և զարասոյ չարգին զգործս . || այսինքն զծոյլ կեանս , և զանկարգ գործս :
 Օ խօսիւս պատարագս մատուցանել . || այսինքն զխօսուն պատարագս :

Բնանց չննելոյ են դատաստանք նորա , և առանց զննելոյ ճանապարհք նորա . || այսինքն անքննելի դատաստանք , անզննելի ճանապարհք :

Բնանց անյանելոյ ունի զքահանայութին . || քի ունի զանանցանելի քահանայութիւն :

Յայսպիսի ոճս՝ ածականն փոխագրու թէ հօլովոյ եղեալ իբր գոյական , կամ նախագրու թէ , խնդիր էական բային է համարելի , որ զօրութի իմանի հանդերձ յարաբերականաւ . որպէս թէ ասէր , Աեանք որ ծուլութի են , պատարագ որ խօսիւք լինի . դատաստանք որ առանց քննելոյ են . Լ՛ :

Դ . Դ սեռական հօլով դնի ածականն , փոխելով յիւր վերացեալ գոյականն . Դ՛ : Ե ճար նա զերկիրն եգիպտացւոց հարուածովք անբժշկութի . || փոխանակ ասելոյ , անբժշկելի հարուածովք :

Իւրեանց ակարութի մտօքն . || այսինքն ակար մտօքն :

Ի իրճէր Կ' քուն թանջրութի . || այսինքն թանձր քնով :

Ի տամմբքն գաղանկութի . || քի գաղանկական ատամմբքն :

Յարբուան դեղոցն օգտակարութի . || քի օգտակար դեղոցն :

Յայսպիսի ոճս՝ ածականն եղեալ Կ' վերացեալ գոյական՝ յատկացուցիչ միւս գոյականին է համարելի :

Ե . Ե երհակ այսմ՝ երբեմն փոխանակ սեռական յատկացուցչի՝ որ պահանջի լինել գոյական , դնի անուն ածական . Դ՛ : Ալեքսանտան օրինակութի . || փոխանակ

ասելոյ , օրինակաւ կամ ըստ օրինակին պետրոսի :
Չ պատուական և զսուրբ հաջրէնի անունդ ՚ի վերայ
 մեր կոչել . || փոխանակ , զսուրբ անունդ հօր :
Յայսպիսի ոճս՝ ածականն ոչ թէ յասակացուցիչ՝ այլ
 համարելի է ածական իւրում գոյականի :

Յ Օ Դ Ո Ի Ա Ճ . Զ

Համաձայնութիւն Մասնական , Հանրական , Հարցական , և
 Թուական անուանց :

Լ յս անուանք՝ որպէս յառաջագոյն ասացաք , ըստ
 մեծի մասին ածական են , և վարին ըստ կանոնաց հա-
 մաձայնութե այլոց անուանց , որք եդան ՚ի նախընթաց
 գլուխն . բայց ունին ևս զտարբեր եղանակս կիրառուէ ,
 զոր կարևոր է աստէն նշանակել առաձինն :

Համաձայնութիւն մասնական անուանց :

Ո՞ն . ո՞ք :

ա . **Ա** որս ըստ բնութե իւրեանց ածական են . և յաս-
 կապէս ասին զանձանց և զկենդանեաց . բայց ուրեք
 զանանձն իրաց ևս ասին՝ մանաւանդ յոքնակի . **Լ** թէ
 միայնակ վարին՝ գոյականապէս նշանակեն . **ո՞ք** :

Ո՞ն պահէ օր ըստ օրէ . **ո՞ն** պահէ զօրհանապազ :

Ս ՚ի ո՞ յալիս մօրուաց փառս արասցէ :

Ո՞չ է ուրիշ հանգիստ գտանել յաշխարհիս :

Ը նխորաբար դնին յառաջ կամ զինի գոյականին . և ուր
 և իցեն համաձայնին սովորաբար ՚ի հոլովն և ՚ի թիւ . **ո՞ք** :

Ո՞ն երիտասարդ . որդի ուրումն իշխանի . ուրիշ ծա-
 ուպի . յուրիշն զինուորէ . որք սմանս . զսմանս ճարտարս :

Լ ո՞ այդր այր . ուրիշ մեծաթան . իմաստնոյ ուրիշ :

Լ յրբեմն փոխադրութեամբ հոլովոյ վարին . **ո՞ք** :

Ո՞չ ՚ի մէնջ կոչեցեալք , կամ յուրիշ ՚ի մարդկանէ . || փա-

խանակ ասելոյ , յուրեք :

Ոչ մեռելոյ սարսու՜ հաւանեացին լսել . ॥ փոխանակ , ումեք :
 Յի հրեշտակաց օտար է նախանձել ընդ սու՜րօք փրկու-
 թիւն . ॥ փոխանակ , ուրուք :

Է . Սախդիրն ըստ կանոնաց դնելի է ՚ի վերայ նախա-
 դաս անուանն . բայց երբեմն դնի կամ ՚ի յետադաս
 մասնականն միայն , և կամ կրկնի ևս . Կ՞ :

Շատ զոր ընդ միմեանս շփոթեաց . ॥ Կ՞ զշատ որ :
 Եղիտ հրեայ զոմն . ॥ այսինքն զհրեայ ոմն :
 Կոչեա զսիմոն զոմն . ॥ այսինքն զսիմոն ոմն :

Է . Սին՝ երբեմն իբրև յորնական վարի , որպէս թէ
 տառս ս՝ յորնականացուցիչ իցէ իւր . Կ՞ :

Եթէ իցեն ս՝ արբ անօրէնք փախուցեալք յերկրէ նոյն ,
 տաջիք ՚ի ձեռս շմաւոնի . ॥ փոխնկ , ոմանք արբ անօրէնք :
 Բազմաց սու՜րօք ՚ի ձէնջ յանձն արարեալ . ॥ փոխա-
 նակ , բազմաց ոմանց :

Եթէ զս՝ գացէ զայնր ճանապարհաւ արս կամ կա-
 նայս . ॥ փոխանակ , զոմանս արս կամ կանայս գացէ :
 Որպիսի ս՝ երբեմն էին . ॥ այսինքն որպիսի ոմանք :
 Ուր երկու ս՝ ՚ի միասին իցեն . ॥ Կ՞ երկու ոմանք :

Ս՛Է :

Է . Սառս Բ՝ վարի ևս իբրև լոկ մասնական . դնի յա-
 ռաջ և զկնի գոյականին միշտ համաձայն հոլովով . Կ՞ :

Լուն Բ՞՛՛՛ , կամ Բ՞՞՛՛՛ . արամբ Բ՞՞՛՛՛ . յաւուր Բ՞՞՛՛՛ , կամ
 ՚ի Բ՞՞՛՛՛ աւուր . Բ՞՞՛՛՛ բանիւ . ՚ի զինուորէ Բ՞՞՛՛՛ :

Փոխադրութե՛ք հոլովոյ վարի բազում անգամ . Կ՞ :

Լա ծովէ զերբ Բ՞՞՛՛՛ . ॥ այսինքն միով :

Եւ ոչ ՚ի Բ՞՞՛՛՛ կողմանէ . ॥ Կ՞ ՚ի միօջէ կողմանէ :

Ի՛ն . Ինչ :

Է . Սորա իբրև մասնական ածականք սովորաբար ասին
 զիրաց , իսկ անձանց՝ դուն ուրեք , Կ՞ :

Իբր զՏերբեալ Էն կալանաւոր • || Կր ոմն կալանաւոր ,
 Ինչն՝ միայնակ ոչ երբէք նախադաս լինի գոյականի •
 զի ոչ ասի , ինչ գործ • ինչ բան • այլ կամ յետա-
 դաս կայ գոյականին , և կամ նախ քան զինքն պա-
 հանջէ բայ , կամ զածական ինչ • ԿՐ :

Օ մեծ Էն բան առ քեզ հասուցանիցեն :
 Եթէ ունիցին Էն ընդ ումէք բանս :
 Իսկ յոր թիւ կամ ՚ի հօլով իցէ գոյականն , ինքն
 մնայ անփոփոխ • ԿՐ :

Իբրու թէ անձին զօրութիւն Էն արարեալ իցէ :
 Իանք Էն ոչ գոյ նոցա ընդ ասորիս :

Բայց մասնականս Էն՝ բազում անգամ համաձայնի
 ընդ գոյականին • և երբեմն վարի փոխադրութեամբ
 հօլովոյ • ԿՐ :

Բռանց երէ՛ յանցանաց լինելոյ :
 Ի մասնաւոր յանցանաց Էրէ՛ :
 Բստ օրինակաց երէ՛ • || Կր օրինակաց ոմանց :
 Իբր պսակաւ Էրէ՛ պաճուճեալ • || Կր պսակաւ իւրի :

Չ • Կր անական անուանիս բազում անգամ յարին յան-
 ուանս՝ ՚ի բայս՝ և ՚ի մակբայս առ ՚ի զարդ • ԿՐ :

Օ քո փափագ արտաքոյ այսպիսւոյ Էն տեսի սահմանի •
 Իբրև կամէին Էն թէ փոխեսցուք զնա ՚ի գործոց անախ •

Օ ի յանկարծակի Էն եղաք :
 Տես դու զի ոչ երկեայ ՚ի տանջանաց Էն էս :
 Ի ժողովել պօզոսի խոււ Էն բազում :

Ս ասն ողորմութիւն իմոյ սիրեցի զքեզ , և ոչ վն քո Էն :

ՍԻՆՈՒ

Է • Ինչ գոյականին՝ նախադասի սովորաբար , և հա-
 մաձայնի ընդ նմա ՚ի հօլովն • ԿՐ :

Ի փոստաւ աւուր • ՚ի գալ փոստ շաբաթուն • փոստ
 մասամբ , ՚ի փոստաւ աւակի :

Պու՛ն ուրէք երևի յետադաս կամ անհամաձայն . ԳՐ
 ՚ի գալ ամին Թ-սոյ . ՚ի Թ-ս կողմանէ գետոյն :

Լ՝ՆԵ

Ը . Սովորաբար նախադասի գոյականին . երբեմն հա-
 մաձայնի . ԳՐ : Լ՝ՆԵ-ի քահանայի . յայլէ ազգէ .
 յայլոց ազգաց . յայլոց քաղաքաց . այլ՛է բանիւք :
 Երբեմն անհամաձայն դնի . ԳՐ : Լ՝ՆԵ յօրինուածոց .
 յայլ մարգարից . առ այլ երնջովք :

Բայց ուրէք դնի յետադաս . զոր օրինակ :

Հոգի այլ առն այլոյ . ազգի այլո՛ւ . յայր յայլ . զսիրտ այլ :

Ի-բախանչի-բ . երչախանչի-բ :

Թ . Սովորաբար նախադաս լինին գոյականին . Ը որու՛ն
 երբեմն անհամաձայն դնին , և երբեմն համաձայն . ԳՐ :

Հեռացեալ է յի-բախանչի-բ մտաց :

Հովուէին յի-բախանչի-բ ժամանակի :

(Թեմարան է սիրան երչախանչի-բոց կրից :

Ի-բախանչի-բ՝ ուղղական ձայնիւ վարի փոխանակ
 սեռականի և արականի՝ Թէ եզակի և Թէ յօքնակի . ԳՐ :

՚ի դարս Ի-բախանչի-բ ցուցին քաջու-Թիւնս . || այսինքն
 յիւրաքանչիւր դարս :

՚ի դառնալ ձեզ Ի-բախանչի-բ ՚ի չարեաց ձերոց . || ք
 ձեզ իւրաքանչիւրոց :

Պարօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր ՚ի նմանէ .
 || այսինքն դրօշից իւրաքանչիւրոց :

Ժ . Սանական անուանք՝ որպէս և հարցականք և
 Թուականք , բաղում անգամ զիւրեանց գոյական փոխեն
 ՚ի խնդիր սեռական կամ բացառական . որպէս՝ փոխա-
 նակ ասելոց , ոմանք զօրականք , իշխան ոք . ասի՝ ոմանք
 ՚ի զօրականաց , յիշխանաց ոք :

Համաձայնութիւն հանրական անուանց :

Մենեքեան • Բարբեքեան , կամ Կիւն :

տ • Սորա համաձայնին ընդ յորնակի գոյականի նախադաս կամ յետադաս • ԿՐ :

Մենեցուն քրիստոնէից լինել ՚ի քրիստոս մի ազգ • :

Սարգարէիւքն ամենեւնիս Թանօթս տայ • :

Հիմն հաւատոյ Բարբեցունց հաւատացելոցն • :

Յորժամ նախադաս լինին դերանուանց , ՚ի նախդրիւ հոլովսն կրկնի նախդիրն • ԿՐ :

Ղմենեսեան զնս • յամենեսեան ՚ի նս • յամենեսին ՚ի մեզ :

Իսկ յետոյ դերանուանց՝ կարէ կրկնիլ , կամ ոչ • ԿՐ :

Քան զնոսա ամենեսին , կամ քան զնոսա զամենեսին •

՚ի ձենջ ամենեցունց , կամ յամենեցունց :

Մեն • ամենայն :

ք • Սորա միօրինակ ասին անձանց և իրաց :

Մեն , ընդ յորնակի գոյականի վարի համաձայն ՚ի սեռական և ՚ի բացառական հոլովս • իսկ յայլ հոլովս մնայ եզական • ԿՐ : Մենից հոգւոց • յամենից մասանց :

Մենայն , նշանակէ ամենայն որ , ամենայն ինչ • զյատուկ յորնական սորա միայնակ կամ ընդ յորնականի վարեն հեղինակք • ԿՐ : Մենայնսն ՚ի ժամանակագրաց գրեն :

Ընդ իւր ածելով զկամսար ամենայնսն • :

Կէս վերոյ ամենայնց լինել իարդան • :

Յամենայնց դարբել չարեայ • :

Սակայն ՚ի հասարակ սովորութե յաճախեալ է սորա եզականն թէ միայնակ և թէ ընդ գոյականի • որ նախադաս կամ յետադաս եղեալ՝ մնայ եզական • զի նշանակութիւն գոլով բաղմաւորական , համաձայն համարի ըստ թուոցն • ԿՐ : Չարացաւ քան զամենայն եղեալս յառաջ քան զնա , || ԿՐ քան զամենեսին եղեալս :

Օ օրացն ամենայնի • լեռնախանօքն ամենայնի •

Օ ամենայնի • զանց արար զմարդկեղէն կարծեօք •

Օ այս անհամաձայնութիւն թուոյ պահէ միշտ
յուզըական և ՚ի նախդրիւ հոլովս • զոր օրինակ •

Բնայն կենդանիք • կենդանիք ամենայն • յամենայն քա-
ղաքս • ՚ի քաղաքս ամենայն • ընդ ամենայն սուրբս • ընդ
սուրբս ամենայն • ևն •

Դ • Ստ համաձայնութե՛ հոլովոյ , եթէ յետագաս իցէ
գոյականին միշտ համաձայնի • Գ՞ •

Բն ամենայնի գլուխ քրիստոս է •

Պատճառ բարեաց ամենայնի աստուած է •

Իսկ նախագաս եղեալ սովորաբար համաձայնի՛ ե-
թէ անկեալ իցէ ՚ի միջի այլ բառ • զոր օրինակ •

Բյսր ամենայնի խառնաղանճ զեանոյ ոչ է մի բարբ •

Բարեացիս յայսմ ամենայնէ մնաստակար Գաղանոյ •

Դ • Յորժամ նախագաս է գոյականին , նախդիրն ոչ
զանց առնի • իսկ յետագաս եղեալ՝ կրկնի նախդիրն
առ երկոսին ևս • Գ՞ •

Բնիցես զարդարութի՛ յամենայն ՚ի կեանս քո •

Չ՛մենայն ՚ի զուր բանէ լուեցո՛ զլեզու քո •

Չ՛սպարտութի՛ զամենայն ՚ի բաց ընկեսցուք •

Չ՛նդ քաղաքն ընդ ամենայն տարածեցաւ բոցն •

Ոչ ո՛ր • ոչ մի ո՛ր •

Է • Սքա սովորաբար իբրև գոյական վարին և եղակի ,
և ասին զանձանց • սակաւ ուրեք դնին իբրև ածական • Գ՞ •

Ոչ ո՛ր ծառայ կարէ երկուց տերանց ծառայել •

՚ի նախդրիւ հոլովս՝ նախդիրն դնի սովորաբար ՚ի վր՛
ո՛ր կամ մի մասնականաց , և ոչ ՚ի վր՛ բացասականին • Գ՞ •

Բ՛ջօք բացօք ոչ զո՛ր տեսանէր •

Ոչ զո՛ր եղծաք , և ոչ զո՛ր զօրկեցաք •

Սակաւ ուրեք նախդիրն ՚ի վր՛ բացասականին դնի • Գ՞ •

Յ՛նչ ո՛ւ ապաւինեցան ՚ի նեղութիւնս իւրեանց
 Յ՛նչ թո՛յ պարտեալ հակառակամարտէ

Ոչ էնչ :

Դ . ՚Պ վերայ իրաց միայն ասի . և ըստ յատուկ նշանա-
 կուէն ածական է . բայց միայնակ եղեալ ՚ի բանի՝ իբրև
 գոյական վարի , և ոչ առնու զնախդիրն հայցականի . զ՛ր
 Ոչ էնչ գիտեմ զանձին իմոյ . տեսանէին և ոչ էնչ , յորս
 օտար է ասել . շո՛ւ էնչ գիտեմ , տեսանէին և շո՛ւ էնչ :

Բնդ գոյականի եղեալ կ՛մ ՚ի նախդրիւ արականն առ
 նու զնախդիր . զ՛ր : Ս՛ի բանակուիւ լինիք յոչ էնչ պէտս :
 Համաձայնութիւն հարցական անուանց :

Ո՛վ . ո՛ր :

Պ . Սորա ըստ յատուկ նշանակուէ գոյական էն , և ան-
 ձանց ասին , յաճախ վարին ընդ մասնականիս ո՛ր :
 ՚ի նախդրիւ հոլովս՝ առաջինն միայն առնու զնախ-
 դիրն . իսկ յայլ հոլովս երկաբանչիւրքն հոլովին . զ՛ր :
 Օ՛ր ո՛ր ասեն զինէն : Բնդ ու՛մ ու՛մէ՛ համարեացի :
 Ո՛ր ու՛ր ու՛ր ՚ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի :

Է . Ուրեք իբրև ածական ևս վարին , փոխանակ ասե-
 լոյ ո՛ր . զ՛ր : Ո՛վ ո՛ր իբրև զեօ այր . ը ՚յմ ո՛վ որ այր :
 Յ՛նչ ո՛ր ՚ի ձէնջ հայր խնդրիցէ որդի իւր . ը ՚յմ ցո՛ որ հայր :
 Բազում ուրեք եզակի ձայնիւ փոխանակ յոքնակա-
 նի վարին . զ՛ր : Ո՛ այնոքիկ իցեն . ո՛ այն իցեն .
 ը այսինքն ո՛յք այնոքիկ : Ո՛վ էիք . ը ՚յմ ո՛յք էիք :
 Ո՛վ են . ո՛վ ո՛ր իցեն . ը ՚յմ ո՛յք են . ո՛յք ոմանք իցեն :

Ո՛ր :

Դ . Սական է , և ասի ՚ի վերայ անձանց և իրաց , նախա-
 դասի միշտ գոյականին , և համաձայնի ընդ նմա թուով
 և հոլովով , զ՛ր : Ո՛ր ո՛վ այսոքիւք հաշտեցայց ընդ քեզ :

Յարի աշխարհէ ես , կամ յարի ժողովուրդէնէ :

Ընդ որով ծառով հասեր առ դոսս :

Սակաւ ուրէք անհամաձայն վարի . զոր օրինակ :

Յար մահուանէ յորդիսի կենդանութի փոխեցայք :

Սարի ևս առանց հարցման՝ փոխանակ բառիս որ-

դիսի . և եղանակ համաձայնութե նոյն է . զոր օրինակ :

Որով դատաստանաւ դատիք , դատելոց էք :

Սասն որոյ յուսոյ ամբաստանիմ ՚ի հրէից :

Որով կամօք և մէք սրբեցար :

Դ . Յարի ևս ընդ մասնականս , և վարի գոյննանցս . զոր :

Որ ոչ կամիցի սիրել զաշխարհս , առելի լինի սատուծոյ :

Որ ընդունի զոր ոչ ես առաքեցից , զիս ընդունի :

Ինչպէս անգամ ՚ի մէջ երկուցն անկանի բայ կամ այլ

բառ . զոր : Որ կամիցի ոչ դատել . թիմնի , որ որ կամիցի :

Որ ուտիցէ ոչ ՚ի սմանէ . թիմնի , որ որ ուտիցէ :

Ինչ . զինչ :

Է . Սխայնակ եղեալք իբր գոյական վարին . իսկ յան-
ուանս յարեալ լինին ածական :

Ինչ նախդրիւ վարի , յինչ , առ ինչ :

Օ ինչ չունի զայլ հոլով . և վարի ուղղական և հայցանին :

Ուղղական . Չինչէ չարութիւնդ այդ :

Հայցական . Չինչ գտեր յամենայն ընչից քոց :

Ը . Սխառտաս եղեալ գոյականի , համաձայնին ՚ի նսխ-
դրիւ հոլովն եղակի ձայնիւ . և նշանակեն որ . զոր :

Օ ինչ քնաս է իմ , կամ զինչ յանցանք են իմ . թիմնի
նր քնաս , որ յանցանք :

Յինչ օրէնս , յինչ կամս , յինչ խորհուրդս կան ընդ-
մեզ հեբրոյեցիքդ :

Է . Հարցական անուանք յորժամեական բայիւ և շաղ-
կապաւ յօդին , նշանակեն իբրև զհանրական անուն . զոր :

ՈՎ և իցէ , ոՎ որ և իցէ , որ և իցէ , որ որ և իցէ ,
զինչ և է , զինչ և իցէ :

Որ զձեռս իւր ձգէ յառնուլ զինչ և իցէ իրս :
Եթէ ընթանեսցի որ ՚ի ձէնջ յիչ և իցէ յանցանս :
Վինին յորոց և իցէ գունոց՝ ընդունելի է :

Համաձայնութիւն Թուական անուանց :

Որքա առ Հասարակ ածական են , և ըստ մեծի մա-
սին ըստ կանոնի ածականաց Համաձայնին . բայց իւրա-
քանչիւր տեսակքն ունին ևս զառանձին եղանակս
կիրառութե՛ , որպէս յօրինակացն տեսցի :

Բացարձակ Թուականք :

ա . Ստ Համաձայնութե՛ հոլովոյ՝ բացարձակ Թուա-
կանք՝ նախադասեալք գոյականին երբեմն Համաձայ-
նին , և երբեմն անհամաձայն դնին :

Համաձայն . փօ : ՚ի փոքէ մարդոց մեղք յճ մահն :

՚ի փո՛ւ մարմնի են անդամք բաղոււմք :

Մի՛ւլ պատարագաւ ամենեքին սրբեցաք :

Յերէս և ՚ի չորս ազգս խնդրեցից զլրէժ :

՚ի բերանոց երկոսց և երկոց վկայից Հաստատեսցի :

Ընհամաձայն . փօ : Օ կնի երէսոն ամաց սպան զհարեւ :

Հարիւր յիսոն արամբք երթեալ դադարէր :

Ուրի հաղար հեծեալ սպառազինաւ եկն :

Բ . Ասկ յետագաս եղեալ գոյականին՝ սովորաբար Հա-
մաձայնին ՚ի հոլովն . և եթէ կից կայցեն մեծ և փոքր
Թիւք , յետինն հոլովն սովորաբար . փօ :

Ընաց վէց հարիւրոց էր ՚ի մեռանանէն իւրում :

Եթէ մեծամեծ ձկանքք հարիւր յիսոն և երկու :

Եւր անդ բաղմուր անուանց իբրև հարիւր և ասնից :

Եւր երբեմն ոչ պահի այս Համաձայնութի՛ , որպէս
և յայլ ածականս , զոր օրինակ :

Պար էր տուեալ արանց եօթն
Եւ էր այրն ամաց հարիւր և խոն և սւր :

Գ. Ստ համաձայնուէ թուոյ՝ բացարձակ թուականք
յորժամ նախադաս լինիցին եզակի կամ յորնակի , յե-
տադաս գոյականն նոցա սովորաբար դնի եզակի . ԳՐ :
Երկուստան եղբայր եմք ծառայք քո
Յետ չրէ՛ հարիւր և երեսուն ամի եղև
Նկան ոգիք իբրև երէ՛ հազար՛ այր
Օ երէ՛ հարիւր այրն և եթ կալա :

Դ. Իսկ եթէ գոյականն իցէ նախադաս , նոյն գոյա-
կանն միշտ դնի յորնակի , եթէ յետադաս թուա-
կանն յորնակի իցէ և եթէ եզակի . ԳՐ :

Ամաց խոստան և փոյ էր ՚ի թագաւորելն
Պարուհիք երկուստան՝ յազնիւ մարդարաց
Պատրաստեցէք զօրականս երկերիւր , հեծեալս եօթնաս-
սան , արգաւորս երկերիւր :

Գրասական թուականք :

Ա. Սորա յորժամ յետադասին գոյականաց , միշտ
համաձայնին ՚ի հոլովս . ԳՐ :

Հանգեաւ աստուած յաւուրն եօթներորդի
Յամին չրրորդի յամեանն երկրորդի թագաւորելոյ նր :

Բ. Իսկ յորժամ նախադասին , երբեմն համաձայնին . ԳՐ :
Ի չրրորդոս՝ սրահու գիշերոյն գայ առ նոսա յիսուս :
Հիւսեւ ընդ նմին զբանս յններորդի սաղմոսին
Եւ երբեմն անհամաձայն դնին . ԳՐ :

Յերրորդ ժամուն ստեղծաւ ադամ
Ի խոստաներորդ իներորդ սաղմոսին նուագէ :

Աւր եթէ գտանի մեծ և փոքր թիւ , իւրաքանչիւրն
հոլովն սովորաբար . ԳՐ : Եւ եղև յամին չրէ՛ հարիւրորդի
և խոստաներորդի ելանելոյ որդւոցն ինչն յեզկայտոսէ :
Առաջ եօթնասներորդի երկրորդի սաղմոսին ազգէ :

Մակբայի Թուականք:


Սորա միշտ յարին 'ի յորնակի գոյական, և համաձայնին ընդ նս թէ 'ի նախադասին և թէ 'ի յետադասին. ԳՐ:
 Ոչ ուղիղ ընթանայ, որ երկնային աստիճան կաղ իցէ:
 Երկնային ձեռաց յաջողակ էր այրն
 Եայնչափ քաջութե սրտի մանկանցն էօրննէցունց:

Չատական Թուականք:

Սորա միշտ նախադասին գոյականի, և սովորաբար անհամաձայն դնին 'ի թիւ և 'ի հոլով. զոր օրինակ:
 Չորեալ տարերցս խառնուածոց լինել հմուտ:
 Եօրնէրեալ և յինէրեալ աւուրբք և ամօք:

Վրկնական Թուականք:

Սորա սովորաբար նախադասին գոյականաց՝ առանց համաձայնելոյ, բայց 'ի նախդրիւ հոլովսն համաձայնին. զոր օրինակ:
 'Ի միոջէն երևի երէպարիկ վայելութե ձե:
 Հատոյց զփոխարէնն ասանապարիկ յաւելուածով:
 Բնդ միոյն զհարեպարիկն փոխանորդէ օգուտս:



Գ Լ Ո Ի Խ Բ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Դ Ե Ր Ա Ն Ո Ի Ա Ն

Ս. ամաձայնութի դերանուան կրկնակի նկատի.
 մի՛ ընդ այլ մասունս բանի, և միւս՝ ընդ այլ դերանուան:

Բստ առաջնոյն, նախ՝ համաձայնի ըստ բայի, և լինի տէր կամ խնդիր:

Նրկորդ՝ ընդ նախադրութե, և լինի խնդիր նորա:
 Նրբորդ՝ ընդ անուան, և լինի կամ բացայայտիչ և բացայայտեալ, կամ յատկացուցիչ, կամ խնդիր, և կամ իբր գոյական և ածական:

Ըստ երկրորդին՝ համաձայնի ընդ այլ դերանուան իբրև
լծակից նորին ՚ի բանի, և կամ իբր ածական:

Է. Դերանունն յորժամ համաձայնի ընդ այլ մասունս
բանի, վարի իբրև անուն, և պահէ զկանոնս համաձայ-
նութեանուն: Աւստի ընդ բայի համաձայնեալ լի-
նի տէր կամ խնդիր, եթէ միայնակ իցէ եդեալ, և
եթէ լծակցութեամբ այլոց դերանուան:

Տէր բայի. փօ: Ա՞ արար զմեզ, և մէ՛ ոչ էաք :

Ա՞ Ինչն է տէր քո երկիրսպագցես սմա :

Խնդիր բայի. փօ: Գ՛ իչեա՞ զի՞ ուր զաւազակն :

Օ՞չեզ Ինչնդ կացուցի ինձ դատաւոր :

Դ. Ինդ նախադրուէ համաձայնեալ լինի խնդիր. փօ:

Այլ գծանեմ զոր՝ ընդ որով օրհնեմք զած:

Նուիրեսցի վն ի՞ սյսու մատենիւ պաղատանք նոցին:

Դ. Ինդ անուան համաձայնեալ լինի բացայայտիչ և
բացայայտեալ:

Բացայայտիչ. փօ: Արկու կողմանցդ լինիցին մեզք .
(փ) նոցա և Յեզ:

Բացայայտեալ. փօ: Ե՞ս (փ) հովիւս յանցեաց . Դ՞ս
(փ) ոչխարքդ զի՞ արարին:

Յտկացուցիչ. փօ: Տէր ի՞ և աստուած ի՞ :

Խնդիր. փօ: Ընդուն ՚ի ճէնջ ասասցէ :

Ա՞ սան թշնամանացն քոց զի՞ եղև այդ :

Ըստ ամ ըստ բաւականին տեսանի ՚ի կանոնս հա-
մաձայնութեանուն. մնայ նշանակել աստէն զհամաձայ-
նութի նր ըստ անուան իբրև ածական և գոյական. և
այդ զհամաձայնութի նորտ ընդ այլ դերանուան:

ՅՕԴՈՒԱԾ . Ա

Էական դերանուանք. Ե՞ս . Դ՞ս . Ինչն:

Ա. Արքա միշտ գոյականապէս վարին. և առնուն ածա-
կան ինքեանց զանուն կամ զընդունելութիւն:

Նախադաս կամ յետադաս լինելով նոցա , համաձայն
 ՚ի հոլով և ՚ի թիւ . զոր օրինակ :

Մէ : անմիտք զվարս դորա մոլորութի համարէար
 Յնճացաւ արարիչն ՚ի գտանելն զկորուսեալս զվեղ
 ՚ի սէն տեր հայցեմ ՚ի մարդասիրեդ ինձ բժշկութի :

Է . Սնն՝ բաց ՚ի լինելոյ երրորդ դէմ , վարի ևս անտար-
 բեր դիմաւ , և նշանակէ խկական , բուռն . և իբրև ածա-
 կան յարի ՚ի գոյական անուռն յառաջ կամ զինի . զ՞ :
 Տեղին ինչն էր անբնակ . ինչն Կապան խախտեցաւ :

Սովին նշանակուի յարի յայլ էական դերանուանս ,
 յետադաս միշտ և համաձայն ՚ի հոլով և ՚ի թիւ . զ՞ :
 Ինչ ինչեան ժողովեմ զինչս :

Օսյալ խրատեմ , և էս ինչն ափորձ եմ :

Օնս ինչն շալկաւ շրջեցուցանէին :

Յուցական դերանուանք . Ս . Դ . ն .

ն . Սորա ղերրորդ դէմն ցուցանեն կարգաւ . և յատ-
 կապէս ՚ի վերայ անձանց ասին , թէպէտ գոյ և ՚ի վերայ
 անանձն իրաց ևս . զ՞ : Եղին ՚ի նս , և ոչինչ եզրիտ ՚ի նս .
 || այսինքն ՚ի թղենին :

Է . Սոյականք են յատկապէս , առնուռն զածական ան-
 ուանս և զընդունելութիս յառաջոյ կամ զինի , համա-
 ձայնեալք ՚ի հոլով և ՚ի թիւ . զոր օրինակ :

Դսոս յեախնքդ մի ժամ դործեցին :

Սոյնպէս յարին ընդ ինչն դերանուան իբրև ընդ
 ածական . զ՞ : Սն ինչն ասաց . Դս ինչն լուաւ . նս ինչն
 ուսոյց : Եւ ըստ այսմ ինչն կարէ յառաջոյ դնիլ . զ՞ :
 Ինչեանք սորա ասացեն :

Է . Տակցեալ ընդ դերանուանս աչս , սոյն , ևն ,
 ՚ի միասին իբրև նոյն դերանուան յարին յայլ
 գոյական , որպէս թէ իցեն ածական նմին . զոր օրինակ :
 Սո սոս արամ , սոյն սոս տիգրան , նոյն սոս վահան , ևն :

Բայց յայս ոճ մտրթ է ևս զգոյակա՛ն անու՛նն բացա-
յայտիչ համարիլ դերանու՛ան :

Յուցականքն՝ Սոյն . Դոյն . նոյն :

տ . Սորա ածական էն , և սովորաբար նախադասին գոյա
կանաց . է զև անհամաձայն դնին ըստ հոլովոյ կամ ըստ
թուոյ , և է զև համաձայնին . ուստի միօրինակ ասին ,
ի սոյն տեղուջ , կամ ՚ի սին տեղուջ . նոյն իրաց ,
կամ նոյին իրաց :

Բայց յաճախ և վայելչապէս համաձայնին ըստ հոլովոյ ,
և դուն ուրեք ըստ թուոյ . օր : Բստ նին բանից . վասն
նորին մեղաց . ըստ Գին օրինակի . վասն Դոյն իրաց .
նովին հոգուով . նովին շաւղօք :

թ . Սակաւ ուրեք յետադասին անուանց , և այն ևս ՚ի
նախդրիւ հոլովս , և նախդիրն կրկնի միշտ . օր :

Ե. Ս զտէր զնոյն զքն սուրբ առնիջէք ՚ի սիրաս ձեր :
Ղանապարհ ընդ որ եկն ընդ նոյն դարձցի :
Յիրօգայթ ՚ի նոյն անկցին :

դ . Սոխադրուի հոլովոյ յաճախ երևի յայստիկ . օր :
Սին նմանութի . || փոխանակ տեւոյ , սովին :
Նովին ախից ծառայէր . || փոխանակ , նոցին :

դ . Սազու՛մ անգամ լծակցին ընդ ցուցականսն , այս ,
այդ , այն , առ ՚ի սաստկացուցանել զնշանակութիւնն :
Յառաջ կամ զկնի դնին համաձայն հոլովով և թուով
սովորաբար , առ որս կրկնի նախդիրն . օր :

Ս ասն սորին այսորիկ յայանի նշանակեաց :
Սին այսմիկ զամենայն փոյթ ՚ի մէջ առեալ :
՚ի սին յայսմ ժամանակի վրդովեցաւ աշխարհն :

Բայց սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին . օր :
Սոյն սոյս առաջնորդք եղեն շարեացն :
Սոյն սոյս հակառակ կացին կամակորութի :

Ե. Սրբեմն յարի ՚ի սոսա և դերանուան Ինչն՝ յետա-
դաս լինելով . Սոյն Ինչն . Կոյն Ինչն . նոյն Ինչն . և միայնակ
առանց գոյականի վարեալ՝ նշանակեն իբր գոյական . Գր .
՚Կոյն Ինչն որ զայս բան տպաւորեաց . ॥ Կր նա ինքն .
Սոյն Ինչն մոռացումն առնէ . ॥ Կր սա ինքն :

Դ. Սայց եթէ յարեցին յայլ գոյական անուն՝ կամ ՚ի
դերանուն էական , նշանակեն ածականապէս . և նախ-
դիրն կրկնի ՚ի նախադաս դերանունն և ՚ի յետադաս
գոյականն կամ ՚ի դերանունն . զոր օրինակ :

Օ. Կոյն Ինչն Կարգեցուցէս հովիւ :
՚Կոյն Ինչն յադամ երևեցաւ հոգի մարգարէութե :
՚Կոյն Ինչն ՚ի մեզ հաստատեցաւ աւետիքն :
՚Կոյն Ինչն ՚ի նա դարձուցանէ զյանդիմանուին :

ՅՕԴՈՍԻԾ . Բ

Յուցականք . Այս . ոչ . ոչն :

Սրբա յատկապէս ածականք են . ասին անձանց և
իրաց . ՚ի վերայ անձնաւորաց ասացեալ՝ կարեն նշա-
նակել իբր գոյական . զոր օրինակ :

Բայ են ճնուողք որդւոցն նոյի . ॥ Կր սրբա են :

Բայս ամենեքեան էին ՚ի կալանս . ॥ Կր սրբա ամենեքեան :

Բայս ևս ամաչեցեալք դարձցին . ॥ սոյսինքն դոքա :

Րնդ գոյականի կարեն նախադաս կամ վերջադաս
կարգիլ՝ այսու որոշմամբ , զի ուր նախադաս են՝ սո-
վորաբար ունին զհոլովան . Այսր , այսմ , այսց , ևն . իսկ
ուր յետադաս են , դնին՝ Այսորիկ , այսմիկ , այսոցիկ , ևն .
Իսկ եղանակք համաձայնութեան սոցա են ըստ յա-

Չորդ կանոնացդ :

ԿԱՆՈՆ . Ա

Կ . Յորժամ նախադաս են գոյականին , սովորաբար
համաձայնին ՚ի հոլովն և ՚ի թիւն , մանաւանդ ընդ

Մէջ լինելով այլոյ բառի • և նախդիրն դնի առաջնոյն
միայն • ուստի ասի • Այսր իրի • այդու բանիւ • այնց
գործոց • յայդց քաղաքաց • ԼԵ :

Բայց ՚ի նախդրիւ հոլովս յորնականին ոչ ասի բնաւ •
Յայսս գործս • յայդս բանս • այլ եզակի դնին • կամ
ըստ միւս հոլովոյն • այսպէս • Յայն գործս • յայն տեղիս
կամ յայնոսիկ գործս • յայնոսիկ տեղիս :

Է • Բազում անգամ անհամաձայն հոլովով դնին այս
ցուցականք • կամ փոխադրութէ հոլովոյ • եզական կամ
յորնական ՚ի տեղի միմեանց • զոր օրինակ :

Ըյս բանիւք ևս բանայ զմիտս կուրին :

Բնդէր է կորուստ ար իւղոյք :

Յայն ժամանակաց հետէ • ॥ փննկ • յայնց ժամանակց :

Օայն ժամու զմեռեալ մարդն • ॥ փոխանակ • զայնր :

Յառաջ քան զայս աւուրս • ॥ փոխանակ • զայսոսիկ :

Օայսու աւուրքք եկն իշխանն • ॥ փննկ • զայսոքիւք :

Ըյս խորհրդով ասէր մարգարէն • ॥ փոխանակ • այսու :

Հանդերձեալ էր աստուած ապականել զայնց ժամանա-
կի ծնեալս • ॥ փոխանակ • զայնր ժամանակի :

Դ • Երբամ ՚ի մէջ նախադաս ցուցականին և վերջա-
դաս գոյականին անկանին այլ բառք • նախդիրն կարէ
դնիլ առաջնոյն միայն • կամ երկուցն ևս • ԿԲ :

Օայն որ յառաջ քան զսակաւիկ մի պատուեալ էր
մարդն • ॥ այնինքն զայն մարդն :

Որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր • ॥ ԿԳ
զայս երդմունս :

Օայս մեծ և փրկագործ աւարտեալ ՚ի մահուն իւր քն
շխորհուրդ • ॥ ԿԴ զայս մեծ խորհուրդ աւարտեալ :

Յայն զնոսա բերէր ՚ի մարդս • ॥ ԿԵ յայն մարդս :

ԿԱՆՈՆ • Բ

Կ • Երկուցականք յետադաս եղեալ գոյականին՝ ըստ կա-
նոնի ածականաց համաձայնին ՚ի հոլով և ՚ի թիւ :

Բայց այսու տարբերութիւնն զի նախդիրն կրկնելի է սովորաբար ՚ի յետագաս ցուցականն . և ՚ի գոյականն յարի յօդ ըստ ցուցականին . զ՞ : Քաւեալ էս յերդմանէ՛ք յայդմանէ : || Ուր յերկոսին եղակի բացառականն կրկնի նախդիրն . և յօդն ք եղեալ կայ ՚ի գոյականն համեմատ ցուցականին այդ : Բստ այսմ էն և ՚ի սոսին . Բնտ այրտ ընտ այդ . ՚ի տարւոջն յայնմիկ . ՚ի պատուիրանացս յայսցանէ . զառնէն զտցնմանէ . ՚ի չարեացք քոց յայդցանէ . ՚ի մասինք յայդմիկ . անուամբս այսուիկ . Թղթովք այդուիկ . և՞ :

Է . Բայց գտանին խոտորումն ՚ի կանոնէս յայսմանէ փոխադրելով զհոլովն , կամ եզական փոխանակ յոքնականի դնելով , մանաւանդ յուղղական հոլովս . զ՞ :

Բուրբս այս անցին խոուլութիւն . || փոխանակ , այսոքիկ : Իաշինքս այս եղէն ընդունայն . || փոխանակ , այսոքիկ : Օարհուրեալք յաներևոյթ տեսնէն այնքիկ . || փոխանակ , յայնմանէ :

Օգուշանալ ՚ի կարևորացս այսոքիկ . || փննկ , յայսցանէ : Բնխառն յերկնաւոր խաղաղութենէս այսոքիկ . || փոխանակ , յայսմանէ :

Յիշատակօքս այսոքիկ . || փոխանակ , այսոքիւք :

Դ . Օ այս ևս գիտել արժան է յամենայն օրինակս , զի նախդիրքն յ , ջ , զ , սովորաբար միշտ կրկնին ՚ի յետագաս ցուցականն . զոր օրինակ :

ԶՆշանդ զայդ կրեմ ՚ի պահպանութիւն անձին խոյ :

Բարեցն զիս տէր յորոգայթէ յայնմանէ :

Իբրև զեղէգն կիզեցի ՚ի հրոյն յայնմանէ :

Բսէ տէր տէր յոսկերսդ յայդոքիկ :

Դ . Իսկ եթէ իցէ առ նախդիր կամ նախադրութիւն , սովորաբար ոչ կրկնի . զոր օրինակ :

Բ օրինականս այս առական խօսեցաւ :

Բ քարեգործն այն չարահասոյց գոսա :

Բայց սահաւ ուրէք տեսանի կրկնեալ, կամ փոխեալ
 ՚ի նախդիրդ յ. ԿՐ: Եթէ հանդերձեալ էմք մտանել առ
 աստուած՝ հահառակօքն վարեցուք առ կռապաշտուհիս
 առ այսոսի: Ստօիր առ թշուառականսդ յայտոսի:

Է. Ասկ էթէ ընդ, ըստ, նախադրութի իցէ, կրկնի բա-
 զումանգամ, բայց մարթ է ևս զանց առնել. ԿՐ:

Բնդ առնս ընդ այսի: ընդ ժողովրդեանդ ընդ այտի: Ե
 Բնդ արձանս ընդ այս. ըստ ամենայն բանիցս այսոսի: Ե
 Բստ ամենայն տեսլեանս այսորի: ԼԵ:

Ը. Այսքէն որդէս երևի յօրինակսդ, զի յորժամ նա-
 խադաս իցէ գոյականն, առեալ ունի զյօդքս ս, ր, ն.

բայց գտանի ևս, զի չէ առեալ զյօդ. ԿՐ:

Դ ժամանակի յայսի. յորդայթէ յայսոմնէ. յաւուք
 յայնի. յօրէ յայնոմնէ. ԼԵ:

Է. Ասկայն երբեմն անյօդ թողեալ նախադաս գոյա-
 կանն, դնի փոխանակ յօդի դերանուն ստացական,
 կամ բառդ աստի, այտի, անտի, ԼԵ. ԿՐ:

Ժողովուրդ չս այս. զաւակի չսմ այսի :

Ուրախ եղիցին անձինք ծառայից չոց այսոսի:

Փոխեցաւ ՚ի տեղուջէ աստի յայսոմնէ :

Տացես զփրկութիւն ժողովրդեան չսմ այսի :

Բժշկեա՛ ՚ի հիւանդութէ աստի իմէ յայսոմնէ :

Դ ժամանակի աստ այսոսի: հասուցանելոց իցես :

Այրեցարուք յազգէ աստի խտորելոց յայսոմնէ :

Ը. Վիտելի լիցի և այս, զի երբեմն մի և նոյն ցուցա-
 կան՝ կամ նման նորա կրկնի ՚ի միում բանի. ԿՐ:

Օայն ամենայն որ ինչ միանգամ ՚ի ձեռն յասոնեայ
 ցուցեալ է, զայս ամենայն ջանասցուք ՚ի մէջ բերել:

Օայն մովսէս զոր ուրացանն, զնա աստուած իշխան
 և փրկիչ առաքեաց :

Թ. Արբեմն ցուցականն կրկնի ընդ իւրում ցուցե-
 լոյն. ԿՐ: Օ ճշդելն և զճմարտելն՝ զայն ՚ի նոյն թողար:

և զկարճառօտ բանն ՚ի համառօտ կացուցանել՝ զայն մեք
 ոչ դանդաղեցաք : || Ուր յերկուս տեղևոք հայցականն
 զայն աւելի դնի՝ խնդիր բայիցն Ռոչա , Կանդաղեցաք ,
 որք արդէն ունէին խնդիր զճշտէն , և զկայուցանէն :
 Սոյնպէս է և այս : Բրժնէլն և նկարէլն՝ այն ՚ի զար-
 գարիչ անդր հայի :

ՅՕԴՈՒԱԾ . Գ

Ստացական դերանուանք :

Սորա ածականք էն , և վարին ՚ի բանի կամ միայնակ ,
 և կամ ընդ գոյականի իւրեանց՝ այսպիսի կանոնօք :

ԿԱՆՈՆ . Ա

ա . Ստացական դերանունն միայնակ առանց գոյականի
 գտեալ , ունի կից սովորաբար զգիմորոշ յօդ , կամ
 զհամազօր նմին՝ աստի , անտի , ին . գօ : Վ՛ր է ամենայն
 ինչ , և ՚ի քոյոցտ տուաւ քեզ : || Ուր ստացականն ՚ի
 քոյոցտ գիմորոշ յօդիւ կայ , զօրութէ՛ ունէլով զգոյա-
 կանն . յի՛ ՚ի քոյոց արարածոց : Բստ այսմ է և ՚ի սոսին :
 Սերայնովս զքոյինստ ծանուցանօղ հրաշայէս :
 Յորժամ սուտ խօսի , յիւրոց անտի խօսի :
 Բզձալի համարիմ ասել ՚ի քոյոց այտի :

բ . Սակաւ ուրեք երեկն առանց յօդի կամ նման բա-
 ուից . գօ : Եթէ էրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ
 տանիցի . Օխարդ որ զայլոց ունիս , իբր ՚ի քոյոց մեծարիս :

ԿԱՆՈՆ . Բ

ա . Ը՛ծանցեալ ստացականք՝ Իմոյին , ձերոյին . կամ
 իմոյին , ձերոյին , ևս՝ սորա , դորա , միշտ նախա-
 դաս լինին գոյականին , և ոչ երբեք յետադաս :

բ . Ձեացեալքն այն վերջաւորութէ՛՝ անհամաձայն
 ըստ հոլովոց դնին առ գոյականն , գօ :
 ժգ .

Ինոյնն համազուգաւ • Իւրայնն նախնեացն • Կայնն մարմնով • Բերայնն բնութեամբս :

Պ . Իսկ կազմեալքն այն կամ այն վերջաւորուի , համաձայնին սովորաբար ընդ գոյականին ՚ի հոլովն և ՚ի թիւն • ՊՐ : Իւրայնն փառացն • յիւրայնն համացեղից • ըստ սրբայնուս բանի • Կրայնն ատեաութի • Իւրայնն զօրօք • նոյայնն կրից :

ԿԱՆՈՆ . Գ

Ա . Երեսուցի և բուն ստացականքն՝ Իմ , բո , մեր , ձեր , իւր , յարին ՚ի գոյական անուն կամ յընդունելութի՝ յառաջոց կամ զկնի , համաձայնելով ընդ նմա ՚ի թիւ և ՚ի հոլով • ուր նախագան միայն առնու զնախդիր՝ թէ դերանունն իցէ այն և եթէ անունն • ՊՐ :

ՅԱՆՆԷ ԻՐՄԷ • յերկրէ Կուսի • յամենայն գործոց Իւրոյ • յոսկերաց Ինոյ • Ի Կոյ ընչից • Ի Կուսի բարերարութենէ • Ի Կուսի ականդ • յականէ Կուսի • ըստ ազգի Իւրուսի • ըստ պատկերի Իւրուսի :

Բ . Իսկ ՚ի յորնակի ուղղականն , և ՚ի նախդրիւ հոլովս յետագաս ստացականն ոչ համաձայնի • զի օտարախորթ է ասել • Բանք իմք • զնացք ձերք • որդիք բոյք • թշնամիք իւրք • կամ ՚ի բանս իմս • զգործս բոյս • զթշնամիս իւրս • սյլ ասելի է • Բանք Իմ • ՚ի բանս Կուս • զզնացս Յեր • ՚ի թշնամիս Իւր : Ուր դերանունն կամ համարի ստացական իբրև ածական յարեալ յանունն անհամաձայն թուով • և կամ սեռական հոլով էականին իբրև յատկացուցիչ եղեալ :

Գ . Իայց ատեանի բազում ուրեք արտաբոյ սովորական կանոնի՝ անհամաձայնութի հոլովոց կամ թուոց • ՊՐ : Ինոյ իմաստութի անսաս • || փոխանակ ասելոյ , իմում է Ինոյն ձեռօք կոչեցի կորուստ • || փոխանակ , իմովք է Ս՝ նամ սպասեալ Կուսի պարգևաց • || փոխանակ , բոյք է ՅԻՐՄՈՒ խորանէ առաքեաց • || փոխանակ , յիւրմէ :

ԺԴ

Գ. Ա որպէս փոխանակ ստացականի բազում ուրէք սե
 ռական հոլով էական դերանուան դնի, սոյնպէս փինկ
 էական դերանուան զստացականն վարեն հեղինակք, զոր
 աներևոյթ բային փոխելով ՚ի ստացական ածական, Գ՞
 ՚ի լսել ին՞ . || փոխանակ ասելոյ, լամ
 Զողաչէլ չո՞ . || փոխանակ, քո
 ՚ի խոնարհէլ Ռերո՞ . || փոխանակ, մեր
 Ուր դերանուանքն՝ տէր աներևոյթ բայիցն ճանաչին,
 քան թէ ածական նոցին:

Յ Օ Դ Ի Ա Ճ . Դ

Համաձայնութիւն յարաբերական դերանուանս Ուր:

ա. Պարտ է որոշել զյարաբերական արն ՚ի հարցակա-
 նէն. զի հարցական արն ածական է, և ըստ կանոնի ա-
 ծականաց վարի. և ոչ բնաւ զանցեալ բառ ինչ կամ
 զբան յառաջ բերէ. այլ ցուցանէ զորպիսուի մօտաւոր
 գոյականին առ որ յարի. Գ՞: Որով չափով չափէք. ար՞
 հոգւոյ էք դուք. յարո՞ ժամու գայ. լա՞:

բ. Ասկ յարաբերականն ար կամ կրճատեալն՝ միշտ
 իբր գոյական նշանակէ, և ունի առանձին կանոնս հա-
 մաձայնութե՞. և կարէ յառաջ բերել ՚ի բանի անդ զամ
 մասունս բանի. ցի՞ զանուն, զդերանուն, զբայ, այլև
 զբազում բառս, կամ զամբողջ իսկ բան:

գ. Աս և բազում անգամ յարաբերեալ անունն կամ
 դերանունն զօրուբ իմացեալ լինի ՚ի բանի, և փոխանակ
 նր՝ դնի յարաբերականն. և լինի ար կամ խնդիր բայի,
 յատկացուցիչ, խնդիր անուան կամ նախադրուէ, լա՞:
 Ը. յս ամենայն տեսանի ՚ի յաջորդ օրինակսդ:

ԿԱՆՈՆ . Ա

ա. Յարաբերականն ներգործութեամբ ունելով զիւր
 յարաբերեալն՝ ըստ բնական շարին պահանջէ յետադաս

լինել . քանզի յայն սակս դնի , զի ՚ի մէջ բերցէ զյա-
ռաջ ասացեալն . Կ՛ : Ի տ նոցա աստուած հոգի յի-
մարութեան . աչս՝ որովք ոչ տեսանիցեն , և ահանջս՝
որովք ոչ լսիցեն : ॥ Ուր յարաբերեալքն աչս , ա-
չանջս , են նախընթաց . և յարաբերականն որով՝ է-
դեալ կայ յետագաս : Բ՛ ստայսմէ և այս :

Հայ ոչ ունիս , որով բուծանես զաղքատն . այլ լէզու
ունիս , որով զհոգևորական հացն ն՚ քաղցրացուցանես :

Ը . Երկայն բաղում անգամ յառաջ է յարաբերականն
քան զիւր յարաբերեալ , ընդ մէջ անկանելով այլոց ևս
բառից . Կ՛ : Ի բրև գիտացին որ ՚ի թեսաղոնիկէ հրէայտն
էին . ॥ փոխանակ , գիտացին հրէայքն՝ որ ՚ի թեսաղոնիկէ էին :
Ի ուալ ՚ի նմանէ որ վ՛ ՚ի քն յս հասարայն . ॥ փոխանակ ,
լուալ ՚ի նմանէ վասն հաւատոցն , որ է ՚ի քն յս :

Իսկ որ ՚ի լուսոյն հրաւիրեցաւ հարսն անձաղդեաց , շի-
ջոց զխայթոց մահու . ॥ փոխանակ , հարսն անձաղդեաց՝
որ ՚ի լուսոյն հրաւիրեցաւ , շիջոց , և՛ :

Օ ՚ի էթէ որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն հաս-
տատուն եղև . ॥ փոխանակ , զի թէ հաստատուն եղև
բանն , որ խօսեցաւ ՚ի ձեռն հրեշտակաց :

Բ՛ ըդ քեզ բուսանին՝ զոր ընդ քեզ թաղեցեր՝ որդա-
րու լին կամ մեղքն . ॥ փոխանակ , ընդ քեզ բուսանին ար-
դարութիւնքն կամ մեղքն , զորս ընդ քեզ թաղեցեր :

ԿԱՆՈՆ . Բ

Ա . Ի բանի՝ ուր զօրութիւն կայ յարաբերեալն՝ որ սո-
վորաբար իմանի դերանուն ինչ , յարաբերական նորա
լստ կանոնի դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարաբե-
րելին էթէ կայր , առանց հայելոյ ՚ի պահանջումն բայի
յարաբերականին . զոր օրինակ :

Երևի որոյ ոչ թերեհաւատ են ՚ի նմանէ . ॥ փոխանակ ,
երևի այնոցիկ որք ոչ թերեհաւատ են :

Մի ինչ եկեացէ ՚ի վերայ իմ յարոյ դուքդ ասացէք .
 || փխնկ , մի' եկեացէ ինչ յայդցանէ զորս ասացիր :

Եղիցիս վկայ առ ամամարդկան՝ որոյ տեսերն և լուար .
 || փոխանակ , եղիցիս վկայ այնց իրաց զորս տեսեր :

Է . Քայց երբեմն այս կանոն ոչ պահի . իբր զի յարաբերականն դնի ըստ պահանջելոյ բային իւրոյ , առանց հայելոյ ՚ի հոլով յարաբերելոյն . Գ :

Օ ի որ ՚ի ներքս անդ էին , ինքնին յուրա զէն և նետ մատուցանէր . || փոխանակ , որոց ՚ի ներքս էին մատուցանէր . բայց դնի որ զի է տէր բայիս էին :

Որում խնդրէ ՚ի քէն տուր , և որ կամի փոխ առնուլ ՚ի քէն , մի' դարձուցանէր զերեսս : || Ուր յառաջին մասին ըստ կանոնի եդեալ է արական որում . և իմանի , այնմ որ խնդրէ ՚ի քէն , տուր :

Իսկ յերկրորդ մասին պահի ուղղական՝ ար բային կափ , փխնկ դնելոյ , յորմէ կամի փոխ՝ մի դարձուցանէր զերեսս :

|| Կար սաղմոսիւք և օրհնութիւն կատարեն զամ Ժամանակս կենաց իւրեանց . || Կր վասն այնոցիկ որք սաղմոսիւք , Լ :

Դ . Իսկ երբեմն ներհակ այսմ՝ ներդործութիւն դնի յարաբերեալն , և զօրութիւն իմանի յարաբերականն . Կ :

Եւ այժմ փառաւորեալ զիս հայր՝ առ ՚ի քէն փառօքն .
 || Կր փառօքն որ է ՚ի քէն :

Յուցանելով զառ ՚ի խոնարհութեն օգուան , և զառ ՚ի հպարտութեն վնաս . || Կր զվնասս որ է ՚ի հպարտութեն :

Նոցաւորք են և Թագաւորքն , և ՚ի նոցանէ սպանուլէն . || Կր սպանուլքն որք են ՚ի նոցանէ :

ԿԱՆՈՆ . Գ

Թարաբերականն ներդործաբար ունելով զիւր յարաբերեալ՝ ըստ կարգի յայն հոլով դնելի է , զոր պահանջէ բայն կամ այլ բառ՝ որոյ է խնդիր , կամ տէր , կամ յատկացուցիչ , որպէս երևի յայսմ :

Պ վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդ-
 ւոյն՝ զոր էդ ժառանգ ամենայնի • որով և զյաւի-
 տեանս արար • որ է լոյս փառաց • ॥ Ուր յարաբե-
 րեալն է գործխական որդ-ովն • իսկ յարաբերողն դնի
 հայցական , գործխական , և ուղղական ըստ պահանջելոյ
 իւրաքանչիւր բայի :

Է . Րայց երբեմն լինի խոտորումն ՚ի կանոնէս • զի յարա-
 բերանն որն դնի ՚ի հոլով յարաբերելոյն որ ներգործուի
 կայ՝ այնպէս , որով յորժամ զօրովի իմացեալ լինէր • զի •
 Րաջնորդեալ ժողովրդեանն այնմիկ ՚ի պէղին յոր ասացի
 բեզ • ॥ փննկ , զոր ասացի • համաձայն տրականին ՚ի պէղին •
 ՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն՝ որոյ նոր արարին • ॥ Մ
 զոր արարին • բայց սեռական դնի համաձայն հոլովոյ
 յարաբերելոյն սեղանոյ :

Ը սել զամենայն զոր հրամայեալ է բեզ ՚ի տեառնէ •
 ॥ Ուր կրաւորական է բայն • և պահանջէ որ հրամայեալ
 է • բայց դնի հայցական ըստ յարաբերելոյն զամենայն •
 Նանեաք զարարին մեր՝ զոր ՚ի վաղնջուցն հեռէ մոլորե-
 ցան հարքն մեր • ॥ փոխանակ , յորմէ մոլորեցան •
 Եւ զինչ հրամայեցաւ առնել յայնչոսն , յորոյ հաստա-
 տեցին զսա • ॥ փոխանակ , որք հաստատեցին :

Ը երբեմն ներհակ սմին՝ յարաբերեալն դնի ՚ի
 հոլով յարաբերականին , զի •

Եւ շէանն զոր խօսիք մի՛ մնացե առ ձեզ • ॥ փոխանակ ,
 և բանն զոր խօսիք • սակայն եղեալ է հայցական հա-
 մաձայն յարաբերականին , Րստ այսմ է և ՚ի սոսին :

Կոչէր առ ինքն զվասակ , և որ ընդ նմա էին իշխանսն
 ամենէքեան • ॥ Մ զամենայն իշխանսն որք էին ընդ նմա •
 Եւ ցուցին նմա որդիք նր ընդ ճանապարհն՝ ընդ որ գնաց
 այրն ոյ • ॥ Մ ցուցին զճանապարհն ընդ որ գնաց :

Ս ՚իսոյնսնայս՝ որ բնակեալ էին ՚ի վանորայս , ընդ նովին
 Տադրովարի , ॥ Մ զմիտյնակեացս լե նովին Տադրովարի :

Գ. Յայսպիսի ոճս երբեմն ընդ մէջ մտանէ թարմատարաբար դերանուէն ինչ առ ՚ի պարզ կացուցանել զքանն . Գժ .

Օ վէմն զոր անարգեցին , նա եղև գլուխ անկեան .
 ॥ փոխանակ , վէմն զոր անարգեցին , եղև գլուխ անկեան : Բստ այսմ է և ՚ի սոսին :

Բնտոճինք և արծաթագին որք էին յազգաց օտարաց ,
 Թլիատեաց զնոսս . ॥ Կ՛ զընտոճինս և զարծաթագինս
 որք էին յազգաց օտարաց , Թլիատեաց :

Եւ պատարագքն որք մատչէին ՚ի խորանի անդ , հուր
 իջանէր և ուտէր զնոսս . ॥ Կ՛ ուտէր զպատարագսն ,
 որք մատչէին :

Է . Իսկ երբեմն յարաբերելին դնի յայն հոլով յոր
 դնելի էր յարաբերականն , և յարաբերականն դնի յայն
 հոլով յոր դնելի էր յարաբերելին . Գժ .

Բպատամբուի ուսուցանես ՚ի մովսիսէ՝ որոյ ՚ի հէթանոսս
 ամենայն հրէայք են . ॥ Կ՛ պատամբուի ուսուցանես
 ամենայն հրէից որք են ՚ի հէթանոսս :

Ի յուշ բերեալ զոր ՚ի քեզ անձառելի բարեմասնաւորք . ॥ Կ՛
 ՚ի յուշ բերեալ զանձառելի բարեմասնուիսն որ ՚ի քեզ
 ॥ Ղըցն տամ և որոյ ընդ ձեզ են պաշտօնեայք քրիստոսի .
 ॥ Կ՛ որըցն տամ պաշտօնեիցն քրիստոսի որ ընդ ձեզ են :

ՎԱՆՈՍ . Դ

Թ . Բստ համաձայնութե թուոյ , իբր բնաւոր օրէնք
 են , զի յարաբերականն ունիցի զթիւ յարաբերե-
 ցն . որպէս և յոլովակի՛ պատհի . Գժ .

Պաշտօնեայք՝ որովք հաւատացեքն : ॥ Ուր յոքնակի
 դնի որովք , որպէս յոքնակի է յարաբերեալն պաշտօնե-
 եայք : Բստ այսմ է և ՚ի սոսին :

Ս ՚ի պատրեսցուք ՚ի զԿալէայք՝ որ կախարդ են զզգայուիսէ
 Յաւորս նոյի յոր տասանն կազմէր :

Ը . Բայց երբեմն յարաբերականն դնի եզակի առ յոք-
 նակի յարաբերեալն , զոր օրինակ :

Մայր իմ և եղբարք իմ սորա են , որ զբանն աստուծոյ
լեն և առնեն . || փոխանակ , որք լեն :

Օ ի ուսանիցին որդիքն քո , զոր դու սիրեցեր . || փո-
խանակ , զորս դու սիրեցեր :

Չարկեաց սէրն սրբունին և այլ մասունք առաքինուէցն ,
որով փայլեցին մարդիկ . || փոխանակ , որովք փայլեցին :

Դ . Ստամին օրինակի՛ եթէ յարաբերականն իցէ ա-
նուն անեղական , հանրական , հաւաքական ,
կամ բազում եղականք , յարաբերականն բազում ան-
գամ դնի եղակի . զոր օրինակ :

Լ . Չքէն են որ բարձրացուցանեն զմարդիկ առ անձ :

Լ . Դեռնի որ կամիցին աստուած պաշտութեամբ կալ ՚ի
քրիստոս յիսուս , ՚ի հալածանս կացցեն :

Ս . Չզով որ գնայր ընդ խաւար , ետես զլոյս մեծ :

Լ . Դեռնի ինչ որ աճեցական է , չէ կատարեալ :

Լ . յսպիսի թեթեւ առ հաւատչեօք քաղցրանայ և թե-
թեւանայ լուծն և բեռն՝ որ վասն քրիստոսի :

Բայց երբեմն դնի յորնակի . զոր օրինակ :

Տուեալ ծառանախ և սեղիս , որովք զերծանիցին ՚ի չարեաց :

Լ . Դեռնի որոց ոչ իցեն թեք և թեփ՝ պիղծ իցէ ձեզ այն :

ԿԱՆՈՆ . Ե

Թ . Լեւադրուք՝ բազում անգամ ընդ յարաբերականին
կայ և այլ անուն կամ դերանուն ինչ՝ իբրև բացայայ-
տիչ յարաբերականին . որ ըստ կանոնի բացայայտչին հա-

մաձայնի ընդ յարաբերականին հորովով և թուով . Կ՞ :

Որում ոչ կամեցեալ հայկայ հնազանդ լինել բելայ .
|| Ուր անունս բելայ՝ դնի իբր բացայայտիչ յարաբե-

րականիս որում : Բայց այսմ է և ՚ի սոսին :

Օ . Որ իբրև տեսին հօտքն զհովիտն բանաւոր ոչխա-
րաց , մեծապէս առ լցան ուրախութեամբ :

Օ . Որ եսայիսս մարդարէ զյանխարժատէպ կարարածն կեր-

պաւորեցոյց : Տ՛րս պա՛րտէ՛ որչափ զօրութիւն իցէ
աստուծոյ անսէսին՝ անխախտելի պահէլ շէնհոսածս
աստուածաբնակ տաճարացս :

Որոյ սերմն իւր ՚ի նմին : ॥ Ուր դերանունս էր՝ դնի իբր
բացայայտիչ յարաբերինիս սրոյ : Ստայսմէ և ՚ի սոսին :
Որոյ ձեռք էրեանց յանօրէնութեան էն :

Տ՛րս գուք չարախօսէք շէնհոսէ :

Որոյ լի էն բերանք նոցա ծաղու :

Տեղիդ շորս՝ կաս գու ՚ի տիմ՝ երկիր սուրբ է :

Տ՛ր մարգարէն աւագափող զնս անուանէ :

Եւ սր մատուցեալ ՚ի վէին կենդանի . ॥ առ որ , ցի ՚ի վէմն :

Է . Քայց երբեմն անհամաձայն գտանի ՚ի թիւ . ցի :

Տ՛ր տալոց և հատուցանելոց էս զանանցական վրէժս :

॥ Ուր զանանցական վրէժս՝ որ է յորնակի , դնի իբր բացա

յայտիչ եզակի յարաբերինիս սրոյ : Ստայսմէ և ՚ի սոսին :

Յորմէ յամենեցուն յայոցանէ ազատ էն իմանալիքն :

Տ՛ր զկերպարանս անցիցն ՚ի մասնէ վերաճառեալքդ

նախագրեցին : Սեղք կապանք դժուարինք էն ոգ-

ւոց , նաև վերք տաժանագոյնք . յորմէ եկն բրիստոս ար-

ձակել ՚ի կապանաց , և բժշկել զվերս :

Յարաբերականս սր փոխանակ այլ հօլովոյ դնի ու-

րէք ուղղական . ցի : Քու գիտես՝ սր ինչ խորհին նորա

՚ի վերայ մեր . ॥ փոխանակ , զոր ինչ խորհին :

Որ ՚ի սմանէն լեալս որ ասելով՝ ոչ վրիպեցէ ՚ի ճշմար-

